



«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ  
ք. Դիլիջան 3905, Մոլդովական 77  
Հեռ.՝ + 374 94 543707  
Էլփոստ՝ [welcome@dcs.am](mailto:welcomedcs.am)  
Կայքէջ՝ [www.dcs.am](http://www.dcs.am)

Ընդունելության թեստի նմուշ

Մաթեմատիկա 5-րդ դասարան

Անուն, ազգանուն \_\_\_\_\_ ամիս, ամսաթիվ \_\_\_\_\_

1. Գտնել ամենափոքր եռանկիչ և ամենամեծ երկնիչ թվի գումարը: [5]

2. Գտնել 245-ից փոքր ամենամեծ թիվը, որի միավորների կազմում գրված է 7: [5]

3. Լրացնել բաց թողած փակագծերն այնպես, որ ստացվի հավասարություն: [10]

$$5 \cdot 4 + 3 \cdot 6 = 110$$

4. Միքայելի տարիքը 4-ով փոքր է իր 10 տարեկան քրոջ տարիքից և 2 տարով մեծ է եղբորից: Եղբոր տարիքը 8 անգամ փոքր է իր տարիքից: Քանի՞ տարեկան է Միքայելի հայրը: [10]

5. Պնդումներից յուրաքանչյուրի դիմաց նշել՝ ճիշտ է, թե՞ սխալ: [5]

1) 0-ն փոքր է ցանկացած բնական թվից: \_\_\_\_\_

2) Թիվը 1-ի բաժանելիս ստացվում է նույն թիվը: \_\_\_\_\_

3) Բնական թիվը 0-ով բազմապատկելիս ստացվում է նույն թիվը: \_\_\_\_\_

4) Եթե բնական թվին գումարենք 1, ապա կստանանք հաջորդ բնական թիվը: \_\_\_\_\_

6. Ծոպանուղում օրական կատարվում է 20 ուղերթ: Քանի՞ մարդ կարող է օգտվել ճոպանուղուց 1 շաբաթում, եթե խցիկում տեղավորվում է 15 մարդ: [10]

7. Չափման միավորներն արտահայտել մեկը մյուսով: [10]

- A)  $1\text{ սմ} = \underline{\hspace{2cm}}\text{ մմ}$       B)  $\underline{\hspace{2cm}}\text{ Ժ} = 3600\text{ վ}$       C)  $90\text{ մմ} = \underline{\hspace{2cm}}\text{ սմ}$   
D)  $\underline{\hspace{2cm}}\text{ վ} = 120\text{ր}$       E)  $\underline{\hspace{2cm}}\text{ սմ} = 2\text{մ}$       F)  $120\text{ր} = \underline{\hspace{2cm}}\text{ Ժ}$       G)  $\underline{\hspace{2cm}}\text{ սմ} = 11\text{կմ}$   
H)  $2\text{օր} = \underline{\hspace{2cm}}\text{ Ժ}$

8. Արտահայտել. [10]

- A) Գրամներով՝  $3\text{գ } 8\text{կգ}$  \_\_\_\_\_  
B) դեցիմետրերով՝  $5\text{կմ } 307\text{մ}$  \_\_\_\_\_  
C) վայրկյաններով՝  $6\text{օր } 52\text{վ}$  \_\_\_\_\_  
D)  $\text{դմ}^2$ -ով՝  $3100000\text{մմ}^2$  \_\_\_\_\_  
E)  $\text{սմ}^3$ -ով՝  $140\text{կմ}^3$  \_\_\_\_\_  
F)  $\text{հա}$ -ով՝  $4500000\text{մ}^2$  \_\_\_\_\_

9. BM ճառագայթը ABC փռված անկյունը տրոհել է երկու անկյունների, որոնցից մեկը մյուսից մեծ է երեք անգամ: Գտնել այդ անկյունների մեծությունները: Գծել փռված անկյունը, փոխադրիչի միջոցով կառուցել ստացված անկյունները, անվանել այդ անկյունները և դրանց դիմաց գրել տեսակները: [10]

10. Կիրառելով բազմապատկման և բաժանման հատկությունները՝ հաշվումներ կատարել հարմար եղանակով: [10]

- A)  $769 \cdot 27 + 769 \cdot 73 =$   
B)  $5 \cdot 157 \cdot 2 =$   
C)  $(83 \cdot 26) : 13 =$   
D)  $(777 + 287) : 7 =$

11. Գտնել բաժանելին, եթե բաժանարարը 4 է, թերի քանորդը՝ 8, իսկ մնացորդը՝ 3: [5]

